Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի « Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ - ի «Աշխարհագրություն» (5 դասաժամ) , «Ֆիզիկա» (15 դասաժամ), « Մաթեմատիկա» (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_ դիմում (Ձև 1)

_ 1 լուսանկար 3 X 4 չափի

_ բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)

_ անձը հաստատող փաստաթուղթ

_ «Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1 – ին և 2-րդ մասերի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում)

_ ինքնակենսագրություն (Ձև 5)

_ այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ - ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

_ ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

_ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

_ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 06.09.2023թվականից մինչև 20.09.2023թվականը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 –ից 15:00 –ը , բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թվականի սեպտեմբերի 27– ին , ժամը 13^{30} –ին ՀՀ Շիրակի մարզի Ազատանի միջնակարգ դպրոցում :

Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք /բնակավայր Ազատան , փողոց 19, շենք 17 :

Տեղեկությունների համար զանգահարել 094121412:

Ազատանի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Հ. Ոսկանյան